«Հավելված N 35
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2019 թվականի հուլիսի 1 -ի
N 476-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Խաղային գործի կարգավորման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով, Նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարը (այսուհետ՝ Նախարար) Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) ներկայացմամբ:

4. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են Վարչության պետը և Վարչության բաժինները:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության հիմնական խնդիրներն են՝

1) խաղային գործունեության կարգավորման ապահովումը,

2) խաղային գործի բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակումը և կատարելագործումը,

3) Նախարարությանը վերապահված խաղային գործի բնագավառում լիցենզավորման գործընթացի քաղաքականության մշակման և կատարելագործման աշխատանքների իրականացումը,

4) խաղային գործի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող անձանց լիցենզավորման գործընթացի կազմակերպումը,

5) լիցենզիայի պայմանների և պահանջների կատարման մասով վարչարարության իրականացումը,

6) խաղային գործի բնագավառում խաղադրույք ընդունելու իրավունքի տրամադրումը և հաշվառումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչության գործառույթներն են՝

1) շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների, վիճակախաղերի կազմակերպման գործունեությունների (այսուհետ՝ Գործունեություններ) գործընթացների կազմակերպման ապահովումը.

2) Գործունեությունների լիցենզավորման հայտերի, լիցենզիաների վերաձևակերպման և Գործունեությունների իրականացման վայրերի փոփոխման հայտերի ուսումնասիրությունն ու դրանց՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի պահանջներին համապատասխանությունը պարզելը և դրանից բխող գործառույթների իրականացումը.

3) Նախարարությունում գործող՝ Խաղային գործունեության բնագավառի լիցենզավորող հանձնաժողովի նիստերի նախապատրաստումը, կազմակերպումը, դրանից և լիցենզավորող հանձնաժողովների եզրակացություններից բխող գործառույթների իրականացումը.

4) Գործունեություններ իրականացնողների կողմից ներկայացված լիցենզավորմանը վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրությունն ու դրանց՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի պահանջներին համապատասխանությունը պարզելը և դրանից բխող գործառույթների իրականացումը.

5) Գործունեությունների իրականացման լիցենզիաների էլեկտրոնային գրանցամատյանի վարումը.

6) Գործունեությունների լիցենզիաների մասով էլեկտրոնային գրանցամատյանում փոփոխությունների իրականացումը և Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով նախատեսված դեպքերում դրանք այլ պետական մարմիններին տրամադրումը.

7) Պարտադիր պահանջներ կամ պայմաններ սահմանող իրավական ակտերի ցանկում տեղ գտած փոփոխությունների մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Գործունեություններ իրականացնողներին հայտնելը.

8) Գործունեությունների լիցենզիաներ տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված կարգով ու չափով պետական տուրքի գանձումը.

9) խաղային գործունեության կազմակերպչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու և կազմակերպչի պատասխանատու անձ համարվելու ստուգման միջնորդության, ստուգման համար անհրաժեշտ տեղեկությունների և փաստաթղթերի ուսումնասիրությունը՝ ներկայացված տվյալների արժանահավատության ստուգումը ու դրանց Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի պահանջներին համապատասխանությունը պարզելը և դրանից բխող գործառույթների իրականացումը.

10) խաղային գործունեության կազմակերպչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու և կազմակերպչի պատասխանատու անձ

համարվելու ստուգման արդյունքներով պայմանավորված եզրակացությունների տրամադրումը.

11) Գործունեությունների խաղադրույք ընդունելու իրավունք ստանալու համար ներկայացված տեղեկացման ուսումնասիրությունն ու դրանց՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի պահանջներին համապատասխանությունը պարզելը և դրանից բխող գործառույթների իրականացումը.

12) Տրված խաղադրույք ընդունելու իրավունքների հաշվառումը և օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմնի պաշտոնական կայքում հրապարակումը.

13) Դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով՝ մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու հիմքով սահմանափակ գործունակ ճանաչված անձանց վերաբերյալ տվյալների բազայի էլեկտրոնային եղանակով վարման իրականացումը,

14) Օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կազմակերպած ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի վերաբերյալ ստացված տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և ուսումնասիրությունը.

15) Օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կազմակերպած ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման արգելափակման ենթակա կայքերը բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովի նիստերի նախապատրաստումը, կազմակերպումը, դրանից և հանձնաժողովի եզրակացություններից բխող գործառույթների իրականացումը. հանձնաժողովի եզրակացությունների, հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա ընդունված որոշումների և հաստատված ցանկերի հրապարակումը.

16) Նախարարությանն ուղղված՝ Գործունեություններ իրականացնողների լիցենզավորմանը վերաբերող դիմումների ուսումնասիրությունը և դրանց համապատասխան ընթացք տալը.

17) Վարչության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի մշակման գործընթացի իրականացումը.

18) քաղաքացիներից, կազմակերպություններից, պետական կառավարման համակարգի մարմիններից, պետական և ոչ պետական այլ մարմիններից ստացվող՝ Վարչության գործառույթներին վերաբերող դիմումների ուսումնասիրությունը և դրանց համապատասխան ընթացք տալը.

19) վիճակախաղերի կազմակերպիչների կողմից համաձայնեցման ներկայացված գովազդի բովանդակության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելը.

20) համաձայնեցման ներկայացված շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատան կազմակերպիչների կողմից հաստատված՝ շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման և անցկացման, ինչպես նաև

վիճակախաղերի կազմակերպիչների կողմից վիճակախաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգերի (այսուհետ՝ Կանոնակարգեր) ուսումնասիրությունն ու դրանց՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի պահանջներին համապատասխանությունը պարզելը, դրանից բխող գործառույթների իրականացումը և դրանց վերաբերյալ դրական կամ բացասական դիրքորոշում ներկայացնելը.

21)համաձայնեցման ներկայացված Կանոնակարգերը՝ դիրքորքշման հետ միասին Նախարարությունում գործող՝ լիցենզավորող հանձնաժողովի քննարմանը ներկայացնելը և լիցենզավորող հանձնաժողովների եզրակացություններից բխող գործառույթների իրականացումը.

22) շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների, վիճակախաղերի կազմակերպման գործունեություններ իրականացնող լիցենզավորված անձանց կողմից հերթական տարեկան պետական տուրքերի վճարման, ինչպես նաև ինտերնետ շահումով խաղի, տոտալիզատորի (այդ թվում՝ ինտերնետ տոտալիզատորի) կազմակերպման գործունեություն իրականացնելու դեպքում խաղադրույք ընդունելու իրավունք (այսուհետ՝ խաղադրույք ընդունելու իրավունք) ձեռք բերելու համար վճարվող պետական տուրքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը.

23) Գործունեությունների իրականացման ապահովման համար, լիցենզավորված անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված լիազորությունների իրականացումը՝ դրանց արդյունքներով պայմանավորված գործառույթների իրականացումը.

24) Գործունեություններ իրականացնող անձանց կողմից թույլ տրված կասեցման և դադարեցման վերաբերյալ վարչական վարույթների գործընթացի ապահովումը և դրանց արդյունքներով պայմանավորված խախտումների հաշվառումը.

25) շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների և վիճակախաղերի բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակումը և կատարելագործումը.

26) խաղային բնագավառում նոր գործիքների ու տեխնոլոգիաների ուսումնասիրությունն և ներդրումը.

27) այլ երկրներում խաղային բնագավառը կարգավորող պետական մարմինների հետ համագործակցությունը.

28) միջազգային և ԵՄ անդամ երկրներում խաղային բնագավառում գործող համաձայնագրերին և ասոցիացիաներին անդամակցությանն ուղղված աշխատանքների իրականացումը.

29) Նախարարությանը վերապահված ոլորտներում լիցենզավորման գործընթացի իրականացման հետ կապված հարաբերությունների քաղաքականության մշակման և կատարելագործման աշխատանքների իրականացումը.

30) Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումը և տեղեկատվության ազատության ապահովումը:

31) Նախարարի և գլխավոր քարտուղարի այլ հանձնարարականների կատարումը:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

7. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից.

1) Խաղային գործունեության քաղաքականության և մեթոդաբանության բաժին.
2) Խաղային գործի կազմակերպման բաժին:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

9. Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Նախարարին:

10. Վարչության գործունեության համակարգումը Նախարարի հրամանով կարող է վերապահվել Նախարարի տեղակալներից մեկին:

11. Վարչության բաժինները (այսուհետ՝ Բաժիններ) ղեկավարում են Բաժինների պետերը:

12. Բաժինների պետերն անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության պետին:

13. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժինների պետերից մեկը՝ Վարչության պետի ներկայացմամբ:

14. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինողի կողմից:

15. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

16. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: